



# ԲԱՂՄԱՎԵԼԻ

ՈՅԺԳ · 1864 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՑՈՒՆԻՍ

Ա.Ռ.ԶԻՆ Ա.ՍՊԱԾՈՒ ՆԵՏՈՂԱՑ Ի ՀԱՅԱ

Ի ՑՈՒՆԻՍԻ (1019)

« Ժամանեցին մեզ աւուղք չարչա-  
» րանաց , և դտին զմեզ նեղութիւնք  
» անհնարինք . . . Ազգք օտարածնաց  
» օտարացուցին զմեզ՝ի բնակութենէս  
» մերմէ . և դարձան փառք մեր յապա-  
» կանութիւն . . . Յաջորդք՝ի յաջորդաց  
» փոխանակեցին , և նուազեաց արդիւն  
» արծարծիչ շնչոյ կենդանութեան . հաս-  
» տատունք յաշխարհի՝ի պանդխտու-  
» թեան իւրեանց պանդխտեցան երկ-  
» րորդ անդամ , և եղեն վտարանդիք  
» 'ի ձեռանէ պանդխտաց ապատամ  
» բաց : ի սիրելեաց քակտեալք՝ զորս  
» ոչ սուը սատակեաց , ցրուեցան զօրէն  
» աստեղաց մոլորական կոչեցելոց . . .  
» բարձան ուրախութիւնք յերկրէ , լու-  
» ցին ձայնք քնարաց , լուցին բոմբիւնք  
» թմբկաց , բարձրացան աղաղակք լա-  
» լեաց » :

Այս ի՞նչ ցաւագին ձայներ . ի՞նչ ա-

կամայ գերութիւնք և կամաւոր օտա-  
րութիւնք . ի՞նչ տրտմառիթ լուութիւնք  
քնարաց և թմբկաց : — Եւ ով մեզի այս-  
օր , Հայկակ , մեր հայրենի քնարաց և  
թմբկաց ջախջախանքը գումէ , և լու-  
թիւնը հոչակէ : — Ականատես վկայ մը ,  
հայրենակէզ հոգի մը , զգայուն և խո-  
ցեալ սիրտ մը , փափուկ և մաքուր գրիչ  
մը . մէկ հատիկ մնացեալ ձայն ողբար-  
կու և պատմիչ ժամանակին 'ի մէջ մեր  
պատմչաց ժ և ժի դարուց , միակ մնա-  
ցեալ շաղկապ պատմիչ ժի դարու , Ա-  
րիստակէս լաստիվարտցի . որ համա-  
ռուէ զյիշատակ « անցիցն անցելոց  
» 'ի յայլաւեռն ազգաց՝ որ շուրջ ըզ-  
» մեօք են , լուդ աշխարհն Հայոց ».  
մէկ մարդու կենաց ժամանակի շափ .  
72 տարի . սկսեալ 'ի 1001 թուոյ . յորում  
շատ կենաց տեսնելու կամ շտեսնելու  
ձանը ծանր գիպուածք հանգիպեցան

իր և մեր աշխարհին մէջ. մեծամեծ և պժգալի փոփոխութիւնք, որոց ականատես, ականջալուր և կարեկից ըլլալով՝ միակ միաթարանք այրած և անշէջ սրբատին զտաւ՝ տեսածը և կրածը գրչին և անով յետնոց աւանդել։ Բայց որչափ որ եղածքն մեծամեծ և ծանրըլլան, մարդիր սրտովը կու կշռէ կու զգայ. և այսով իր զգացումն աւելի մեծ կ'ըլլայ. գոնէ մեր լաստիվարտոցին համար այսպէս եղած է. անոր համար եղածէն աւելի զգացածը կու նկարագրէ. ընդարձակ տեսարանը՝ իրու իր սրտին հայելոյն մէջ բովանդակելով ցուցընէ. — աւելի ողբասացութիւն քան պատմաբանութիւն. — զոր ինքնին շատ անդամ խոստովանի, և ուրիշ պատմչի կարօտ սեպէ գիպուածքն. իսկ ես, կ'ըսէ, զրեցի «ոչ լիով, այլ միայն զակիգրեն իրացն » որ եղին և անց ընդ մեզ»: Դժբաղդաբար ինչուան հիմնայ մենք այլ իրեն հետ « կարօտացաք հին ժամանակագրացն » պատմութեամ՝ զի ըստ պատշաճի և « յարմարական բանիք դրոշմեսցեն . . . » զանցելոցն զհանդիպումն անսխալա « պէս որ ինչ եղեն ». ոչ ոք իր ատեն կամ յետոյ մանրամասն զրեր է այն բաները, մանաւանդ թէ զրեր՝ և մեզի չէ հասեր. որով պատմասէրք թերևս՝ ի զուր մեղագրեն զԱրիստակէս՝ փոխանակ իրաց՝ մեզի լաց աւանդելուն համար: Սակայն ովկ կրնայ իրաւամբք մեղագրել այնպիսի սիրտ մը՝ այնպիսի վըշտաշատ տեսարանաց մէջ պաշարեալ. « ի » չորից կողմանց. յարենելից սուր, յա « ըսմուից սպանումն, 'ի հիւսիսոյ հուր » և 'ի հարաւոյ մահ ». սիրտ մը որ երբեմն տեսաւ իր ազգը՝ հայրենիքը՝ բարդաւաճանաց և պանծալի փառաց և ուժոյ մէջ, իրու 'ի գեղեցիկ առաւօտու և յերիտասարդական հասակի, և ապա տեսաւ յանկարծ երեկոյացեալ և ծերացեալ, խաւարեալ և օրհասական. — տեսաւ, ինչպէս ինքն կ'ըսէ « Չորք ա. » թոռք թագաւորութեան ոմէր Հայք, « թող թէ զկիւրապաղատին (Հայոց) » իշխանութիւն և զոր 'ի Հոռոմոց ». ամենքն այլ իշխաններով, զոնագոյն

զրօներով և զինուորութեամբք զարդարեալ և զուարճացեալ. և յետոյ ամենքն այլ մէկմէկու ետեւէ քակեալ քանդեալ քայքայեալ պանդխատեալ յօտար աշխարհս. — տեսաւ Հայոց քահանայապետական ամոռը, « Հայրապետութիւն մեծ և նախանձելի ամենայն ազգաց » , իր ամենէն մեծ փառաւորութեան և եկեղեցական բազմութեան մէջ (Պետրոս Գետաղարձ ճոխասէր կաթողիկոսի ատեն), և յետոյ զնա այլ իր յաջորդներն այլ անտեղի և անհանդիսավորական յօտարաց երկրի և բոնութեան. — տեսաւ անապատները ծաղկեալ միանձանց բազմութեամբ, և յետոյ թագաւորանիստ քաղաքներն անգամ անապատացեալ յիշխանաց և 'ի զօրականաց. — տեսաւ զՀայաստան յըղփացեալ հարատութեամբք վաճառականութեան և երկրագործութեան՝ բաւական ժամանակ աշխարհին հանդարտ մնալովը, և յետոյ՝ գանձեր բաժնողներն մուրացկան կամ բարբարական պտըտիլ. — տեսաւ Հայաստանի յետին պարծանաց պսակ՝ հազարտաճարեան Առնին՝ կրկին անդամ մնատնեալ, անկեալ յօտար և բարբարոս ձեռս, և արեամբ ողողեալ. — տեսաւ իւր սեփական հայրեննեաց պանծալի քաղաքը (Արծն), և իւր ընտանի ծննդեան գեղաւանը (Լատիվերտ) սրով և կրակով այնպէս մաշած, որ մէկուն հազիւ աւերակաց հետքը և սև անունը մնայ (Գարւա Արզ) յետ 800 տարուան. մէկայլին՝ ոչ հետքը և ոչ անունը, մինչև թէ ուզեմք այլ ըստ խրատու պատմչին, չեմք կրնար զթողեալն պատմել՝ 'ի նմանէ՝ յաւերակացն ուսանել: — Ցեսաւ իր համազգիները, նաև իր աստիճանակիցները, անսսուներէ աւելի անարդ և խշչալի կերպով մորթուած և մորթեղերծ եղած՝ նորատեսիլ վայրենի ասպատակաց ձեռքով: ... Այսպիսեաց ականատեսի մը սրտաշարժ քան մտադատ զրիչը, ես չեմ կըրնար մեղագրել. մանաւանդ որ իր յըտակ վայելչարանութեամբն, աղնիւ ըղփացմամբք և նկարագրութեամբք, և իր իսկատիպ ոճովն՝ ոչ միայն նորօրինակ

և աննման պատմիչ մ' է մեր, այլ թերևս յետ մեր ուկեղէն դարուն պատմը՝ շաց՝ քան զամեն ուրիշներն աւելի համբոյր է և սիրելի ընթերցողաց: — Եւ ահա սա ինքն է որ այնպէս անսովոր կամ մարդարէախօս իմն ոճով ըրած է իր պատմութեան նախարանը, զոր և ես քեզ նախարանեցի, չայկակ. և յորում գեռ ախորժեմ և կարծեմ լսել լաստիվարտոցին ակնարկած լրեալ քընարաց յետին արձագանգը, և անթոպ թմբկաց թագուցեալ բոմբինքն: ... Ովկու յիշէ՝ կուլսէ. ով որ կ'ապրի՝ կույիշէ. թէ հարկ է ապրիլ՝ հարկ է և յիշել և լսել. գոնէ անծերանալի յիշատակօք լսել այն բմբկի բումբինը, առանց որոյ չկեան և չկան հայրենիք: ...

Բայց ինչ թմբուկ հայրենի, և ինչ տակի վայրենի, որ մէկզմէկ ջանային խափանել այն ատեն: — Սկիւթիոյ անապատին բարբարոսաց սրտակտուր տօպտօպայն՝ որ մեր աշխարհին հիմերը թնդացուց, գեռ ամենանուազ բզզիւն մը սեպուէր այն տիեզերադղորդ փողոյն ձայնէն առաջ, զոր զարհուրեալ նախնիք մեր համարէին տարուէ տարի լսել. և ոչ մեր նախնիք միայն, այլ գրեթէ ամեն քրիստոնեայք յարևելս և յարևմուտս՝ մեծ տագնապի մէջ էին այն ատեն. երբ 'ի գալստենէ Քրիստոսի Տեառն մերոյ հազար տարի նոր անցեր էր, և 'ի հնուց կարծիք էր շատ հաւատացելոց՝ թէ անկէ ետև աշխարհիս վախճան պիտի ըլլայ. Յայտնութեան զրոց մէջ ըստածը՝ թէ « կապեաց զատ » տանայ հազար ամ » լցուած ըլլալով՝ նորէն պիտի արձակի սատանայն և բռնանայ չարութեամբք ՚ի վերայ երկրի, հոգւոց և մարմնոց վտանգք համնին. անձանօթ ազգեր ՚ի ծագաց երկրի վազեն ՚ի վերայ քաղաքացեալ ազգաց, և սրով ու աւերսմամբ ջնջեն. և 'ի ժամանակի անդ բռնութեան բարբարոսաց՝ Նեռինն և սատանայի՝ գայ և ինքն Քրիստոս Աստուած՝ դադրեցընելու դժամանակ և զծնունդս ժամանակի, և երկիրս աւեր և ոչինչ դառնայ: Ըստ բազմաց կարծեաց ոչ ՚ի ծննդենէն Քրիստոսի

այլ 'ի խաչելութենէն համրուէր հաղար ամն. և ահա մեր պատմին այլ կենաց ծաղկած ատենն էր այս ժամանակս. որ և առանց յայտնի երկար բանիւ այս ահաւոր ըլլալիքը յիշելու (զի և չեղաւ այլ), դարձեալ նոյն տարին կու սեպէ մեր աշխարհին չարեաց դուռը. մանաւանդ որ արեգական խաւարում մ' այլ հանդիպեցաւ ուրբաթ օր մը<sup>1</sup> նոյն տարին 1033, « զոր տեսեալ » բազումք 'ի գիտնոց՝ կարծեցին գոլ » զծնունդ Նեռինն՝ զօրն զայն, կամ մեր » ծամեծ չարեաց գուշակ. որ եղեւ իսկ » յաւուրս մեր, յորս պատմութիւն բանիս առաջնորդեալ տանի զմեզ, զոր » տեսագք աչզք մերովք զաստուածա » սաստ հարուածն » , և այլն: Նաև պատմութեան վերջաբանին մէջ այլ կրկնէ. « զի յայնմէնետէ զոր յառաջաց » զոյն ասացի, յորում թուական Հայոց » ՆԶԲ (1033) էր, մինչև ցայժմ՝ ուխտ » սրբութեան և կարգեկեղեցեաց քայլ » քայեալ ապականեցան. և ոչ համար » բաւ խաղաղութեան կամաւետիս բար » բեաց լուագք, և ոչ մի արձան յաղլ » թութեան կանգնեցաւ՝ ոչ թագաւոր » բաց և ոչ իշխանաց » : Ուրիշ պատմիչ մը համարձակ այլ կու զրուցէ այն տարոցն համար, թէ « Արձակեցաւ սաւ » տանայ ՚ի կապանաց խաչելութեանն » Քրիստոսի » :

Իսկ մերս՝ ուրիշ նշան կամ դիպուած մ' այլ կու տայ այն հանդերձեալ մեծ ըլլալիքին. Երուսաղեմի կործանման ատեն հանդիպածին պէս կ'ըսէ, 'ի Հայաստան այլ մէկ անձանօթ մարդ մ' երեւցաւ նոյն ատեններ, որ արեւելեան գար:

1 Պատմիչը կ'ըսէ « յամեւանն արաց՝ յաւուր » ուրբաթու « . ամսուն օր ըսէր. ոչ հայկական հաստատ տօմարի հաշւով և ոչ շարժականով արաց ամսոյն մէջ նոյն տարին արեւու խաւարմունք կ'ըլլայ. Հապա թէ որ մեր ամիսներն այլ սկսինք համրել Հռոմայեցւոց ամսոց հետ, այսինքն նաւասարդը յունուարին հետ, միայն այս կերպով արաց ամիսն զուգի ընդ յունիսի, որոյ 29ին ուրբաթ օր յամի 1033 ստուգիւ արեն խաւարած է: Միմիթար Նյիրիվանեցի քաղոց ամսոյն 15ին կ'ըսէ այս խաւարումն, սակայն այն օր այն տարի խաւարումն չկայ. ուրիշ պատմիչք այլ քանի մը տարի ետև կու ձգեն խաւարումը:

ւառներէն գալով դէպ 'ի յարևմուտք կ'երթար, վանայ ծովուն հիւսիսային եղեղներէն մինչեւ յերզնկա՝ անդադար կանչելով. Եղնւկ զիս, եղնւկ զիս, (վայ ինձ, վայ ինձ). — կու հարցընէին թէ ով ես, ուստի կու զաս, ինչու կ'ըսես. ուրիշ պատասխան չէր 'ի տալ, բայց նոյն եղուկը. մինչեւ ոմանք (զորս անմիտ կոչէ պատմին) խելաթափ սեպեցին զնա. « Բայց իմաստունքն ասէին. » այդ եղուկդ ամենայն երկրի լինելոց » է » : Այսպիսի զիալուածներ՝ եթէ շատ կամ աւելի կերպով մերազգեաց և մասնաւնդ թագաւորաց և իշխանաց միտքը շփոթեցին ու սրտերնին վախցուցին, առանձին ազգային աւանդութիւնն մ'այլ ունէին պատճառ. այն էր՝ իրենց նախնեաց անիրաւ գործերը, և անոնց համար ժամանակին սուրբ և ընտիր անձանց յանդիմանութիւնը և սպառնալիքը. մանաւանդ Ս. Մեծին Ներսեսի, որ նախատեսութեամբ գուշակեր էր Հայոց գլուխը գալիքը, և վերջի ժամանակներ ըլլալու բաներ, և աշխարհիս կատարածին մօտերը. նաև Նետող ազգի մը արշաւանքն 'ի Հայս, և բոլոր աշխարհս տակն ու վրայ ընել և ժողովուրդը ցրուելը: Զայս կու յիշեն իր վարուց զրիչք նաև ուրիշ պատմիչք այլ ԺԱ. դարէն ետե. իր վարքը երկարօրէն զրոյն Մեսրոպ Երէցն այլ 'ի Ժարու այնպիսի խօսքեր կ'աւանդէ Սրբոյն, սակայն իր զրոց հնագոյն օրինակաց մէջ (որչափ հանդիպեր եմ), զկան այն որոշակի խօսքերը՝ զոր յետին օրինակաց մէջ կարդամք՝ Մէլչուկեան և թաթար Նետողաց վրայ. և յայտնի է որ յետոյ աւելցուած են. կէս մը այս (ԺԱ.) և յաջորդ (ԺԲ) դարուն մէջ, կէս մ'այլ յետ արշաւանաց թաթարաց 'ի սկիզբն ԺԴ դարու. սրբոյն Ներսեսի ընդհանուր խօսքերը մասնաւորելով և յարմարցընելով Ցուղբիկեանց և ձինկիզեանց: Սակայն ստոյգ է որ հասարակ եղած էր այն Ս. Հայրապետին սպառնալեաց վախը. և երբ այսպիսի նշաններ տեսնէին մէկէն անոր խօսքերուն կատարուիլը կարծէին: Այսպէս ըրին նաև ժամանա-

կին թագաւորք և ազգային զլսաւորքն, Յովհաննէս-Ամբատ Բագրատունին, որ Յովհ. կողեռն վարդապետին ձեռքով քննել տուաւ և նոյն կարծեաց վրայ հաստատեցաւ. և Սենեքերիմ Արծրունեաց թագաւորն՝ որ շատոնց նոյն վախին մէջ էր, որ և իրեն համար Քրիստոսի 1000 թուականէն սկսած էր: Առաջին նետ Նետողաց իրեն զիալաւ: Զարմանքն այս է որ մեր պատմիչն՝ միայն տեղ մը անցողաբար և լուելեայն կու յիշէ այն զիալուածը՝ որ իր յետագայ ողբոց նախասկիզբն և պատճառն է, և պատմութեան պէտքն այլ պահանջէր յիշելը. կ'երևայ որ բաւական տեղեկութիւն չունէր Հայաստանի սահմանածայրը եղած բաներուն, նոյն իսկ Արծրունեաց մէջ. բայց զիալուածին տարին ստոյգ յիշէ, 1022ին հանդիպած բան մը պատմելու ատեն, « Երկու կամ երեք ամօք յառաջ գործեցաւ », կ'ըսէ Սենեքարիմայ հասած վտանգն. որ է 1049 ամն Քրիստոսի:

Մինչդեռ 'ի բաւական խաղաղութեան և շինութեան էր աշխարհնիս և սահմանակիզբն այլ, անակնկալ ատեն և կողմէ նոր և անծանօթ ասպատակ մը սփռեցաւ Հայաստանի հարաւ - արևելեան ծայրը, իվասպուրական աշխարհ, որոյ իշխան և թագաւոր էր Սենեքերիմ Արծրունի, հասակաւ, պատուվ և խելզք յառաջացեալ, սիրելի վասլի կայսեր և պատկառելի իշխանաց Հայոց: Այնպէս անկարծ, աննման, անշնորհք և անգութերեցաւ այն խոշժադրժ ազգն անօրինաց, որ ոչ այսչափ միայն կ'ըսէ պատմիչն այլ և կարծէ թէ «օձք թեաւ» ւորք հասին և կամէին ցոլանալ ընդ « ամենայն աշխարհ հաւատացելոց. այս » է առաջին ելն արիւնարբու զազաւնացն ». և տարակոյս չկայ որ մեծ շփոթ և սարսափ ձգեցին թէ խաղաղաբնակ ժողովրդեան, որոց շէնքերը և վարուցանը կոխէին և կողոպտէին, թէ իշխանական և զինուորական դասուց. որք ոչ միայն անպատրաստ էին, այլ և « չէին բնաւ տեսեալ (այնպիսի) զօրք » հեծելոց . . այլակերպ, աղեղնաւորս և

» Հերարձակս իբրև զկանայս . և յայն .  
 » Ժամ զօրքն Հայոց չէին սովոր պատ .  
 » բաստ լինել ընդդէմ նետիցն » . կամ  
 ինչպէս ուրիշ և գրեթէ ժամանակակից  
 պատմիչ մը կ'ըսէ . « Նոքա ունելով ըզ .  
 » բնութիւն արիւնարբու գաղանի , զի  
 » են ազգը ահաւոր տեսլեամբ . զի տե .  
 » միւ զիմաց նոցա զարհուրեցուցանէ  
 » դտեսողան և ահարեկ առնէ , և բնա .  
 » կութիւն նոցա 'ի լերինս և 'ի գաշտս  
 » և յանապատս , որպէս զվայրենի գա .  
 » զանաց . և են շաղղակերք որպէս ըզ .  
 » գաղանս . ոչ պատուեն զմեծամեծս ,  
 » ոչ խնայեն յալիս և 'ի հարկիս ծե .  
 » ըոցն , ոչ ողորմին երիտասարդին և  
 » տղայոյն , ոչ խնայեն 'ի մանկութիւն  
 » ումեք , ազգ չար և դառնացող » : Այլ  
 ազգեաց նետերն 'ի վան և յիստան  
 չհասած՝ Սենեքերիմայ և իր եղբօր Դե .  
 րանկայ զօրքերն խմբեցան ելան զանոնք  
 յետ գարձնելու , առաջնորդ ունելով  
 զ՛նապուհ՝ ծեր և փորձ սպարապետն  
 Արծրունեաց , որ բանակ և պատերազմ  
 վարելը իրեն խաղ ըրեր էր 'ի մանկու .  
 թիւնէ . և սակայն հոս զժուարին և նոր  
 խաղ մը տեսաւ . անճունի հեծեալք  
 հերարձակ , և մանաւանդ լայնաձիգ ա .  
 զեղանց նետեր հետարձակ , որ առջի բե .  
 րան չէին թողուր Հայոց՝ իրենց մօտե .  
 նալ անգամ : .. Ո՞հ , և Հայք էին երբեմն  
 աղեղնաւորք , այլ և քանաձիգ արք ա .  
 զեղանց . որոց ազգահայրն ինքնին հա .  
 մարուի հնարող աղեղան յետ ջրհեղե .  
 ղին , Հայկն հսկայ . և որոց զինուորու .  
 թեան սեփական նշան իսկ աղեղն և կա .  
 պարճն էր , զոր և ինչուան հիմայ տես .  
 նեմք իրենց հետ կուուղ Հռոմայեցի  
 կայսերաց դրամոց վրայ . բայց երբ այս  
 Փոխագայի գաղթականն՝ (Հռոմայեցիք)  
 հին Սպանազայ սերունդն կամ մերձա .  
 ւորն՝ Լատիոնի տիրելով՝ կամաց կա .  
 մաց բոլոր խոալիոյ , Յունաց , Փոքր Ա .  
 սիոյ տիրեց , իր աշխարհակալութեան  
 գրեթէ յետին սահման ընելով մեր աշ .  
 խարհը , հսկայակերպ Հայաստանի ու .  
 սէն վերուց անոր պարծանաց և ուժոյ  
 զարդ՝ հարուստ կապարճը : Հայաստան  
 ոչ այնքան կողոպտուելով թողուց իր

կարշնեղ բազկաց խաղալիկ կամարը ,  
 (աղեղը) , որքան ընտրութեամբ փոխեց  
 զայն՝ աւելի յարմար զինուց հետ , մօտէն  
 կուուելու մօտեցող դիմամարտից դէմ .  
 ինչուան այն ատեն՝ հիւսիսային և ա .  
 րևելից ասպատակաց դէմ՝ անոնց գոր .  
 ծածած զէնքով կ'ընդդիմանար հեռա .  
 ձիգ աղեղամբ . անկէ ետև տեսաւ որ ա .  
 րևեմուտքն է իր գլխաւոր դիմակացն .  
 կեսար , Պոմագէոս , Լուկուլ և կրասոս  
 սովորեցուցին իրեն նոր օրէնք կուուելու՝  
 սրով և վիքնաւ : Յետոյ Բիւզանդացոյ  
 զաշնակցելով կամ հետևելով՝ անոնց  
 զինուորութեան օրէնքն և կերպերն ա .  
 ռին Հայք , առանց բոլորովին թողու .  
 իրենց նախնական և հայրենի թուշոն  
 զէնքերը . սակայն քիչ գործածէին , և  
 այն այլ՝ աւելի լեռնաբնակք կամ ընդ .  
 դէմ լեռնաբնակաց :

Արդ հիմայ այս նորատեսիլ նետո .  
 զաց հարուածներէն՝ նախ տագնապե .  
 ցան մերայինք , յետոյ խիզախելով ուժով  
 յարձակեցան հասան այլազեաց այ .  
 լանդակ բանակին և սուր բանեցընելով՝  
 առատ արիւն հանեցին : Եթէ գաշտին  
 վրայ ընկնողաց բազմութիւնն յայլազ .  
 գեաց եղաւ , բայց վիրաւորելոց բազմա .  
 գոյնն 'ի Հայոց , այն յանկարծահաս և  
 հեռածիգ նետերէն՝ որոց դէմ չէր կըր .  
 նար Շապուհ ուզածին պէս իր կտրիճ .  
 ները քշել և քաշել . մանաւանդ որ իրեն  
 արգելք կ'ըլլար մէկ նետ մը , կամ այն  
 նետից նպատակ մէկ զլուխ մը , որ իր  
 զլխէն այլ բարձր և թանկ էր , թէ և ոչ  
 իրեն պէս խոհական և փորձ . աւելի  
 տաք արիւնոտ և ըստ այնմ այլ լի ե .  
 ռանդեամբ և յանգնութեամբ : Սա էր  
 թագաժառանդն Դաւիթ , անդրանիկ 'ի  
 մէջ չորս կտրիճ որդւոց Սենեքերիմայ .  
 հասակին և աստիճանին դրդումն , հօրը  
 պատիւն և սէրն , և քաջութեան զինով .  
 ցուցիչ մնութիւնն՝ գրեթէ աշքերը գո .  
 ցեր էին ընդդէմ վտանգաց , և բացեր  
 միայն 'ի խնդիր վրիժուց և փառաց .  
 խնումիկ կամ արաբիկ երիվարին վրայ  
 թուշրտելով՝ սանձը թողած , միայն սու .  
 րը մերկ վղերու և լայնշի երեսներու  
 վրայ իջեցընելով՝ կու բանար ահեղ և

վտանդաւոր ճամբայ մը, թէ և անվախ քաջութեամիք, թշնամեացխառնակ գընդերուն մէջ. ուր՝ յիրաւի չէին կրնար ասոնք դիւրաւ նետ բանեցընել իրենց ճակտին և կրնըկին համնող կտրըճին վրայ, բայց նա այլ չէր կրնար երկար ատեն ողջ կամ անխոց մնալ: Շապուհ շուարած՝ իր զօրաց կարդը և թշնամեաց անկարգութիւնն այլ մոռնալով՝ Դաւթի վրայ հոգալով կու կանչէր « Թագաւոր, ետ դարձիր, այս իմ և քու տեսած սովորական պատերազմն չէ. նոր ու յանկարծահաս զէնքեր են. այս անիծեալ նետերուն դէմ բաւական պատսպարութիւն չունի մեր զօրքն, և ահա մեծ մասն վիրաւորած է: Դու այլ շատ առաջ կու նետուիս. Ետ դարձիր թագաւոր. յիշէ որ հօրդ պատասխան պիտի տանք կամ դու կամ ես... Եկու այս անգամ պահ մը յետ քաշուինք, նետերուն դէմ դնելու զըռահ հագնինք և այնպէս քշենք դագաղանները»: Քանի անգամ այլ այս պէս յորդորեց ետ կանչեց, թիկնապահ հասուց, Դաւթի աչքը արիւնով լեցուած՝ ականջներն աղեղանց կաշիներուն շկահիւնէն խցած՝ յամառած չէր ուզեր յետ դառնալ, ինչուան որ թշնամիներուն երեսը իր երկրին սահմանէն չդարձրնէ: Երբ տեսաւ Շապուհ, որ այլ ոչ խօսելու ատեն կայ ոչ մոտիկ ընել տալու, ինքն այլ իր սպարապետութեան և մանաւանդ դայեկութեան իրաւամիք, (վասն զի Դաւթի և անոր եղբարց դաստիարակ և կրթողն էր, և իր գրկաց մէջ գգուեր էր անոնց կայտառ հասակը), յառաջ քշեց ձին, հասաւ արքայորդւոյն և անոր թիկնապահ կըռնակին կունտ կոփ մը տալով, ձիուն դլուխը բռնի դարձուց, քշեց իր զօրաց բազմութեան կողմը, և բոլոր բանակն այլ կամաց կամաց յետ յետ քաշելով, հանեց յայտնի վտանգէն, արիւնեան և խոհեմութեան պարտքերը միատեղ կատարելով. որովհետեւ Նետողքն այլ իրենց կողմէն յետ դարձան կորան. զոր հարկ ըլլայ մեզի յետոյ փնտուել:

Սենեքերիմ եղածը իմանալով՝ մէկ

կողմանէ շնորհակալ եղաւ Աստուծոյ և իր կարիճներուն, բաւական փառքը դառնալուն վրայ. մէկայլ կողմէն մտածեց որ եթէ թշնամիք այլ յամառէին կամ նորէն ետ դառնային, երկար ատեն անոնց դէմ դնելու ոյժ չունի, մասնաւանդ թէ յոյս չունի. և այս անյունութեան զիւաւոր պատճառն այլ մեր նախայիշեալ ներսիսեան գուշակութիւնն էր՝ Նետողաց յարձակման վրայ. գրքու օրը տարակուսանօք անցնելէն ետեւ, գիշերը (կ'ըսէ պատմիչն) հասարակաց քնոյ և լուսիւթեան ատեն՝ ինքն իր աշխարհին և տանը հոգովը տքուն՝ գրքեր իջուց և քննեց Ս. Ներսիսի խօսքերը, և տարին յարմար գտաւ. արդէն սատանայն արձակուած էր ըստ կարծեաց նոցա: Այն զիշեր ծեր և երկարահոգ թագաւորն մէն մինակ իր տէրութեան սահմանը և բաղդը փոխեց. երկիրը թողլով ժողովրդեան գոնէ մէկ մասը ազատել և յապահովել յանձն առաւ: Արևելեան այլազգի ազգաց և տարուէ տարի ելած նորանոր տէրութեանց դէմ դնելու զօրաւոր տէրութիւն՝ միայն Յունացիւթիւն կրնակալութիւնն կրնար ըլլալ այն ատեն, որ արդէն իսկ եօթն հարիւր տարի ստէպ կուուեր էր լնդգէմ Պարսից և Արաբացւոց: Ատենին Բիւզանդիոյ կայսրն էր մեծն և խոհեմնվասիլ, որ շատ տարի առաջ (1004) Վրաց և Հայոց սահմանները կոխեր էր. և այն ատեն նախատեսութեամբ իմն Սենեքերիմ դեսպան խալիքով՝ մեծարանաց հետ դաշնագրութիւն այլ ըրեր էր հետը. և հիմայ անոր վրայ վատահանալով՝ իրեն ճար գտաւ. յետին ճար երկիրը թողով Յունաց կայսեր, և ասոր տէրութեան մէջ երկիր մառնուղ, և հոն փոխազրուիլ իր արքունեօք և զօրականօք և ժողովրդենէն գաղթիլ յանձըն առողջներով: Ղրկեց իր տաք գլուխ անդրանիկը՝ ի կ. Փոլիս, առ վասիլ կայսր, ուրիշ 400 ազնուականներով, 1000 ձիաւորով և իր երկրին տէր Եղիշէ արքեպիսկոպոսով. 300 ջորւոյ բեռ այլ ընծաներով. զորս ընդունելով վասիլ կայսերաբար պատուեց իր պա-

տուողները, ընծայողները՝ ընծայեց, և երկրի փոխանակութեան դաշնազրութիւնն այլ կնքելով՝ դարձուց պատգամաւորները: Հետևեալտարին (1024) ելաւ ծեր թագաւորին՝ անուանակիր և պայազատ հին Ասորեստանի մեծ Սենեքերիմ թագաւորին, տոհմապետն Արծրունեաց և Սամնեցոց, իր ընտանեօք և ազգականաց մէկ մասամբ, բազմութեամբ իշխանաց և պաշտօնէից և 14,000 հեծելովք կամ կտրիճ մարդով, որոց հետ ՚ի հարկէ այր և կին, մեծ և փոքր հնդապատիկ աւելի բազմութիւն այլ պիտի ըլլար, գուցէ բոլորն իրեւ 100,000 հոգի. թողլու հին հայրենեաց հողը և նոր հայրենիք հիմնելու յերկիր օտար, եթէ հնար է այս: . . . Շատ հեղանկէ ետև այսպիսի գաղթականներ գնացին ՚ի մեր բնիկ աշխարհէն՝ յօտար աշխարհս. ուր և ցարդ բնակին իրեւ յիւրեանց աշխարհի. սակայն թերես ոչ մի գաղթական ասոր պէս հանդարտ և հանդիստ կերպով գնաց. ուրիշներն աւելի ստիպմամբ և արտորնօք. ասիկայ աւելի մտածութեամբ և հաշուով: Բայց հանդերձ այսու՝ ոչինչ պակաս ողորմելի. թողուլ սկզբնական հողը, հազարամեայ չէնկեր և տուներ, հարց և նախնեաց կերպ կերպ յիշատակներ, եկեղեցիներ և գերեզմաններ, և մեծամեծ չարեաց սպառնացեալ վախով երթալ յանձանօթ երկիր, նոր տեղ, նոր լեռներ և դաշտեր, անձանօթ կամ օտար ազգաց մէջ բնակելու և խառնուելու. իրեւ յաւիտենական մնաս բարով մ'ըսելով այն ամենայն բանի՝ զոր բովանդակէ անունն չայրենիք: . . . Ապա չեմ տարակումիր որ շատ սրտառուչ եղած պիտի ըլլայ այս Արծրունեաց գաղթումն և բաժնուին իրենց հին և բազմացիշատակ տնէն տեղէն. շատ դառն եղած պիտի ըլլայ նոյն ինքն գաղթողաց զլուխ Սենեքերիմ թագաւորին՝ թողուլն իր հոյակապ գագկաշէն պապական Ծատանայ արքունիքը, Աղթամարայ գլեակը, Վանայ բերդերը, և մանաւանդ հարց գերեզմանն, իւր դաստակերտ և կամ զարդարած հոչակաւոր Վանքն վա-

րագայ. ուր և յետին միսիթար պանդրվածից և օտարացերց, նաև յետ գաղթականութեանն ուզեց, (և բաղդ ունեցաւ) որ մարմինն թաղուի, և իր նախնեաց հետ ննջէ անոնց հասարակաց բնահայ բարձին վրայ. թողլով ունայն գերեզման մը ՚ի Ս. Նշան Սերաստիոյ, զոր ընտրեր էր իրեն երկրորդ Վարագ. և հօն դնելով Վարագայ մեծահոչակ սուրբ Խաչը, զոր հետը բերեր էր, և յանուն նորին կոչեց նորաշէն և մինչեւ ցայժմ անուանի վանքն այլ, Ս. Նշան, մօտ ՚ի քաղաքն Սերաստիոյ: Այս՝ որ երբեմն զիսաւոր քաղաքը էր Բ. Հայոց նահանգին, հիմայ այլ եղաւ մայրաքաղաք և աթոռ Սենեքերիմայ նոր թագաւորութեան. որոյ սահմանքը որոշ գծած չէ մեզի պատմութիւնն. այլ կ'ըսէ թէ Սերաստիոյ հետ արուեցան Արծրունեաց լառիսա և Ապարա? քաղաքք և շատ գեղեր, բայց չէին հաւասարեր՝ ոչ շատութեամբ և ոչ հարստութեամբ՝ իրենց թողած տեղւոյն. որ էր Վանայ ծովուն չորս բոլոր երկիրն. ուր միայն ծովուն եղեղքը կամ մօտ տան քաղաք կային, զոր և թուեն Յայսմաւուզը մեր. Վան, Արտամէտ, Ոստան, Հողգ, Խիզան, Խլաթ, Մանազկերտ, Արծկէ, Արծէշ, Բերկրի. և ասոնցմէ օրերով ճամբայ հեռու սահմանք՝ մինչեւ ՚ի Գուլամերկ ընդ հարաւ, Սալամաստ ընդ արևելս, և Երասխ գետ ընդ հիւսիս. ուր այն քաղաքաց հետ թողուց Սենեքերիմ առ Յոյնս « Գեօլս 4400 լայնանիստ և » արդիւնաւորա », և 70 կամ 72 բերդ. միայն իրեն և իր ժողովրդեան, և իրենց նախնեաց անմահ արգեանց անմահ յիշատակ պահեց և չօտարացուց՝ հազարէն աւելի վանքեր, կամ ըստ ոմանց 900 փոքր անհան վանքերը թողլով՝ 445 մեծ և հոչակաւորներ՝ իրեւ սեփական կալուած կնքեց իրեն, իր և առաջ-

1 Յաջորդ տարին (1022) քիչ մ'այլ ընդարձակեցան այն կալուածքն, երբ Դաւիթ՝ Վասլի գաւառաններէն զատուելով՝ անոնց գլխաւորը (Նիկեփոր Փոկասը) սպաննեց, և ՚ի կայսերէն պարգև ընդունեցաւ Կեսարիոյ սահմանները, զորս յետոյ ժառանգեց իր փեսայն՝ տարաբազդ Բագրատունին Գագիկ Բ.:

նոց տուրքերովը դարմանելու . որպէս զի վանականքն այլ իրրև հաւատարիմ պահապանք սրբազն հայրենի գերեզմանաց և յիշատակաց՝ աղօթեն վասն հեռաւորաց և մերձաւորաց , վասն հանգուցելոց և հանդիստ վնտոռղ պանդը տելոց<sup>1</sup>:

Այս նոր օրինակ գաղթը և մանաւանդ անոր պատճառն՝ կ'երեսի թէ մեծապէս ազգեցին Սենեքերիմայ թագակցաց , որոց զիսաւորն էր Շահնշահն Հայոց Յովհաննէս-Սմբատ՝ թագաւորն Բագրատունեաց . որ՝ երբ նոյն գաղթին տարին Վասիլ կայսր երկրորդ անգամ եկաւ 'ի Հայաստան , ընդառաջ անոր զրկեց զկաթուղիկոսն Պետրոս , և ասոր ձեռքով գաղտ կտակ ընել տուաւ՝ յետ մահուան կայսեր թողլու իր թագաւորական քաղաքը՝ Անի , և բոլոր իր վիճակը . զոր և կատարեց ու կնքեց կաթողիկոսը : Հետևանքն յայտնի է . . . յետ 23 տարւոյ (1045) Սմբատայ տարաբաղդ յաջորդն՝ եղբօրորդին Գագիկ՝ ստիպուեցաւ թողլու իր թագաւորաբնակ աշխարհը , և Սենեքերիմեանց սահմաններուն քովերը պանդխութեան տեղ առնուլ : Ոչ յետ շատ ժամանակի իր անուանակից Վանանդայ թագաւորն այլ նոյնպէս ըրաւ . թողլուց Յունաց զկարս և առաւ երկիր մը մէկալոնց մօտ : Քիչ ատենէն ուրիշ թագաւորապունք և մեծամեծ իշխաններ այլ , ինչուան արևելեան Արցախոյ և հարաւային Սամոյ ամուր երկիրներէն գաղթական եկան , վերոյիշեալ թագաւորաց սահմաններուն հարաւակողմը , Փռիւգիոյ և կիւկիկիոյ տաւրոսական իւրանց մէջ իրենց նոր հայրենեաց բոյնը հաստատելու , շատ գժուարութեամբ և աշխատանք . սակայն այս ետքիններս՝ իշխանազունք և սոսկականք՝ աւելի բարդ դաւոր եղան . վասն զի , թէ և ջանքով ,

<sup>1</sup> Յայսմաւուրք յունիս ամոյ մէկին նշանակեն այս գիպուածներս , որոց մէկն միայն այս օր հանդիսած է . այսինքն կամ Նետողաց պատերազմն (որ հաւանագոյն թուի) , կամ Սենեքերիմայ գտղթելու օրն , իր երկրէն ելանելն , կամ Սեբաստիա մտնել :

սակայն կոխած տեղերնին հաստատրոնեցին և տիրացան . մինչդեռ երեք թագաւորքն այլ իրենց սերունդներովն՝ զրեթէ հազիւ 50 կամ 60 տարի երենալով՝ անհետացան , թէ իրենց և Յունաց հակառակութեամբն , և թէ զիրենկը իրենց հայրենիքէն նետահալած ընող բարբարոսաց՝ այն նոր հայրենեաց երկերներուն այլ տիրելով կամ անհանգիստ ընելովն . . .

Հիմայ այս աշխարհավրդով Նետողաց հետամուտ ըլլանք պատմական անվախքննութեամբ . թողլով այսօր մեր անոնցմէ նետահարեալ հայրենեաց փառագուրկ իշխանաց հետոց և նշխարաց վրայ՝ արտասուախառն աչք ածելլ : Եւ եթէ այս ցաւառիթ տեսարանէս աւելի ցանկալի մը չէ անոնց չարեաց առիթը քննելն այլ , սակայն պատմական տեսութեան մէջ մեծ և կարևոր դէպք է Նետողաց արշաւանքն , որ ոչ միայն մեր աշխարհը այլ և ուրիշ շատ աշխարհաց յեղափոխութիւն բերաւ . թերեւս ինչուան այս օրս այլ կարևոր կամ զիսաւոր կերպարանք մը կու տայ քաղաքավարութեան ազգաց արևելից , մասամբ իմն նաև արևմտեայց :

Հ. Դ. Մ. Ա. Խ. Ա.

Մանկութիւնը՝ ունկնդրութիւն կը պահանջէ . երիտասարդութիւնը՝ զգուշաւոր չափաւորութիւն . իսկ ծերութիւնը՝ կատարեալ խոհեմութիւն :

Մնհնազանդ տղայ՝ կործանումն է ընտաննեաց . հասակին հետ կ'ածին կրքերն ալ . ծննդք , աչք ունեցէք վրանին , ընդունայն տեղ կ'ափսոսաք ետքէն :

Երիտասարդի մը խիղճն ու պատիւը երբոր չսանձեր զինքը՝ նվանոր բուռն կրիցը կրնայ չափ դնել . իրեն անյագ փափազներուն զիմաց պղտիկ է աշխարհս :

Պատկառելի է ծերութիւնը . իրեն դողդըղացող հասակը՝ իրեն ճերմակ ամփը՝ շատ իսկ ազդարար են իրեն :